ԳԼՈՒԽ ԼԵ.

1 Յաղագս թէ ո՛րպէս ի բանս չարախորհուրդս եւ անմիտ մարդկան ելեալ թագաւորն Հայոց Վարազդատ, զզաւրավարն Հայոց Մուշեղ սպանանէր:

2 Այլ իբրեւ տեսանէին զթագաւորն Հայոց Վարազդատ մեծ նախարարքն Հայոց՝ թէ մանուկ բանսերթուկ է, զչար ի բարոյ որոշել չգիտէ, սկսան այնուհետեւ ըստ կամաց իւրեանց վարել զթագաւորն. որպէս եւ կամէին, բանիւք իւրեանց տանէին եւ բերէին զնա: *3* Նա առաւել ունկն դնէր մանկտոյն՝ որ ի տիոց հասակակիցք էին նորա, առաւել քան զծերոցն իմաստնոց՝ որք կարող էին զաւգտակար խրատն մատուցանել նմա:

4 Այլ Բատ, որ նահապետն էր ազգին Սահռունեաց տոհմին, դայեակ սնուցիչ թագաւորին Վարազդատայ, կամեցաւ նա զգործ զաւրավարութեան սպարապետութեանն Մուշեղայ յինքն յափշտակել ի նմանէ: *5* Վասն այսորիկ սկսաւ քսիս մատուցանել զնմանէն առ թագաւորին Վարազդատայ առ իւրում սանուն, եւ ասել՝ թէ ի սկզբան ի նախնեացն հետէ զձեր Արշակունեաց տոհմին Մամիկոնէից է կորուսեալ, զի հակառակորդք ձեր դոքա լեալ են ի բնէ անտի. եւ համակ զերկիրս Հայոց դոցա է կերեալ, մանաւանդ Մուշեղի. մանաւանդ զի այր չար է եւ նենգաւոր: *6* Զի սիրելի է ի թշնամեաց ձերոց, եւ ատելի սիրելեաց ձերոց. եւ համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ, երկմտութեամբ եւ դժխեմութեամբ: *7* Զի ո՞չ այն Մուշեղ է, որ ի թագաւորութեան ժամանակ Պապայ ի պատերազմունսն Պարսից քանիցս անգամ ձեռնահաս եղեւ սպանանել զՇապուհ արքայն Պարսից, եւ ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. եւ երբեմն զկանայս Շապհոյ թագաւորին ի բուռն էարկ, եւ խնամոտ գթով ժանուարաւք արձակեաց զնոսա զհետ Շապհոյ: *8* Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ զՈւռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ, եւ սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին: *9* Ո՞չ այդ այն Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա եւ դորին խորհրդովդ զաւրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց եւ գրգռեաց զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պապայ, մինչեւ ետ սպանանել: *10* Այլ արժան է մեռանել ի ձեռաց քոց, եւ չէ պարտ կեալ դմա. այլ թէ ոչ աճապարեսցես, արքայ, այժմ զհայ երկիրս խորհի լնուլ քաղաքաւք, եւ զաւրանիստ առնէ բնակութեան զաւրացն Յունաց: *11* Եւ այնուհետեւ կամ թագաւորն Յունաց հանէ ի քէն զթագաւորութիւնս Հայոց, կամ այս Մուշեղ սպանանէ, եւ ինքն թագաւորէ: *12* Եւ այսպիսի բանիւք գաղտնի հանապազ զթագաւորն գրգռէին, մինչեւ հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզաւրավարն Հայոց սպանանել:

13 Ապա խորհուրդ արարին, թէ ո՛րպէս ըմբռնել կարասցեն զնա. քանզի մեծապէս երկնչէին ի նմանէն: *14* Թէ զգայ, ասեն, մեծ պատերազմ առնէ. եւ ոչ ոք կարէ զդէմ քաջութեան նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորու-